

## Ք Ն Ն Ա Ր Կ Ո Ւ Մ Ն Ե Ր      О Б С У Ж Д Е Н И Я

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԹԱՑՍԵՐԸ  
ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ  
(1990–1999 թթ.)

ՀԱՄԼԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ, ԱՐՏԱՇԵՍ ԲՈՅԱԶՅԱՆ

Որևէ երկրի կամ նրա մի հատվածի բնակչության ժողովրդագրական իրավիճակն ուսումնասիրելիս, ընդհանուր առմամբ, ուշադրություն է դարձվում բնակչության թվի, կազմի և վերարտադրության ոեժմի վրա<sup>1</sup>:

Մեր կատարած հետազոտությունը վերաբերում է 1990–1999 թթ. Գյումրիի բնակչության ժողովրդագրական փոփոխություններին, քննարկվում են քաղաքի բնակչության թվի շարժընթացին, վերարտադրությանը և բնատանիքի կազմին վերաբերող հարցերը: Հարկ է նշել, որ մեզանում քաղաքի արդի ժողովրդագրությանը վերաբերող աշխատանքներ դրեթե չկան, հրատարակված մի քանի հոգվածներն էլ վերաբերում են Շիրակի մարզին կամ աղետի դոտուն<sup>2</sup>:

1. Գյումրիի բնակչության թիվն ու նրա շարժընթացը: Հայտնի է, որ բնակչության վերարտադրության ժամանակ փոփոխության է ենթարկվում նրա թիվն ու սեռատարիքային կազմը: Ընդունված է այդ վերարտադրությունը բաժանել երեք խմբի, դրանք են՝ ընդհանված, երբ ծնունդների թիվն ավելի մեծ է, քան մահացությունների, սովորական, երբ սերնդափոխության ժամանակ բնակչության թիվը չի փոփոխվում, և կրծառված, երբ մահացությունների թիվն ավելի մեծ է, քան ծնունդների: Բնակչության բնական տեղաշարժերի կամ վերարտագրության վրա իրենց աղդեցությունն են թողնում բնակլիմայական, սոցիալ-տնտեսական, սոցիալ-մշակութային և հոգեբանական, իսկ նրա քանակական արժեքների վրա՝ սեռատարիքային կառուցվածքը, ամուսնությունները և ամուսնալուծությունները, այսինքն՝ ժողովրդագրական գործոնները<sup>3</sup>: Նշված տեսանկյուններով էլ փորձենք դիտարկել Գյումրիի բնակչության թվի և աճի փոփոխությունները հետազոտվող ժամանակահատվածում: Հետխորհրդային տարիներին Գյումրիի բնակչության թիվն ու կազմը կրել է բավականին կտրուկ ու բարդ փոփոխություններ՝ պայմանագործած աղետալի երկրաշրջով, սոցիալ-տնտեսական ոեֆորմներով, ինչպես նաև տարվող ոչ ճիշտ ժողովրդագրական քաղաքականությամբ: Այդ իսկ պատճառով,

1 Основы теории народонаселения, М., 1986, с. 274-283.

2 Խ. Ա վ ե տ ի ս յ ա ն. Սպիտակի երկրաշարժի գոտու բնակչության միգրացիայի վերլուծությունը. – «Լրաբեր հասարակական գիտությունների», 2000, № 1, էջ 123-130, Ն. Մ ա ր գ ա ր յ ա ն. Ժողովրդագրական գործընթացները Շիրակի մարզում 1989–1998 թթ. Երևան, 2000, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1999թ. Հունվար–դեկտեմբեր. Երևան, 2001, էջ 118–129:

3 Е. Л. Ш у ա լ օ վ. География населения. М., 1977, с. 22.

Գյումրիի բնակչության թվի վերաբերյալ եղած ավյալները շատ հակասական են ու մոռավոր, որոնք լրացուցիչ դժվարություններ են ստեղծում հաշվարկներ կատարելիս: Այսպես, Ա. Պոտոսյանը նշում է, որ Գյումրին 1988 թ. (մինչ աղետալի երկրաշարժը) ուներ 230.6 հազ. բնակիչ<sup>4</sup>: Երկրաշարժի պատճառով մարդկային զոհերի թիվը Գյումրիում, ըստ որոշ տվյալների, կազմել է 15–17 հազ. մարդ: Երկրաշարժից հետո, մինչև 1989 թ. կեսերը, Գյումրին մարզային վիճակագրական ծառայության տվյալների համաձայն ունեցել է մոտ 160 հազ. բնակիչ (ըստ 1989 թ. մարդահամարի՝ շուրջ 122.6 հազ.): Որպեսզի ավելի հստակ պատկերացում կազմենք 1990–1999 թթ. Գյումրիի բնակչության շարժընթացի մասին, այն ներկայացնենք աղյուսակով (բնակչության թվին վերաբերող տվյալները վերցվել են Գյումրիի վիճակագրական ծառայությունից):

#### Աղյուսակ 1

Գյումրիի բնակչության թվի շարժընթացի և աճի գործակցի  
փոփոխությունը<sup>5</sup>

Տարեթիվ	Բնակչ. ընդհանուր թիվը (հազ.)	Բնակչ. ընդհանուր աճը (հազ.)	Բնակչ. աճի ընդհանուր գործակցը (պրոմիլ)
1990	200.3		
1991	204.4	+4.1	10.1
1992	208.7	+4.3	10.4
1993	210.1	+1.4	3.3
1994	210.3	+0.2	0.47
1995	210.7	+0.4	0.95
1996	211.2	+0.5	1.18
1997	211.3	+0.1	0.2
1998	211.7	+0.4	0.9
1999	211.6	-0.1	-0.2

Աղյուսակի տվյալներից երկում է, որ ուսումնասիրվող ժամանակաշատվածում Գյումրիի բնակչության ընդհանուր թիվն աճել է 11.3 հազարով, տարեկան 1.2 հազ. միջին աճի պայմաններում: Բնակչության աճի փոփոխական ցուցանիշները սերտորեն կապված են մեխանիկական տեղաշարժերի հետ, ինչպես տեսնում ենք, շատ ցածր ցուցանիշներ են գրանցվել 1993 թ. հետո:

Այսօր բավականին բարդ խնդիր է Գյումրիի (ինչպես նաև Հայաստանի ցանկացած քաղաքի) առկա բնակչության թվաքանակի որոշումը: Այս պայմաններում, քաղաքի առկա բնակչության մոտավոր արժեքները գտնելու համար, փորձել ենք օգտագործել մի շարք ցուցանիշներ:

4 Ա. Պոտոսյան. Հայաստանի Հանրապետության գյուղական տարաբնակեցումը. Երևան, 1999, էջ 193:

5 Աշխատանքում հիմնականում օգտագործվել են Գյումրիի վիճակագրական և ժողովրդագրական այլ ծառայությունների ամենամյա տվյալները:

- ա) ընտանիքների թիվը և կազմը,  
 բ) ընտանիքների անդամների թիվը,  
 գ) «Փարոս» համակարգում փաստադրված ընտանիքների թիվը,  
 դ) էլեկտրաէներդիա սպառող հաշվիչների թիվը,  
 ե) բնակչության թիվն ըստ սոցիալական խմբերի:

Երբ Գյումրիի ընտանիքների և նրանց անդամների թիվը համեմատում ենք 1970–1990 թթ. համապատասխան ցուցանիշների հետ, ապա տեսնում ենք, որ տարբերությունն այնքան էլ մեծ չէ: Այսպես, ըստ 1979թ. մարդահամարի տվյալների, Հայաստանի քաղաքային մշտական բնակչության ընտանիքների անդամների միջին թիվը 5 մարդ էր<sup>6</sup>, հաջորդ՝ 1989 թ. մարդահամարի ժամանակ (որի տվյալները, հատկապես աղետի դուռու համար շատ մոտավոր են) այն հավասար էր 4.3 մարդու: 1990-ականների վերջերին, մեր հաշվարկներով, այդ ցուցանիշը չէր անցնում չորսից:

2000 թ. սկզբներին էլեկտրաէներդիա սպառող հաշվիչների թիվը շուրջ 31.885 էր. ընտանիքի անդամների միջին թիվն ընդունելով 4 մարդ, կարելի է ասել, որ Գյումրիի առկա բնակչության թիվը կազմում էր մոտ 127.5 հազ. մարդ: Իսկ ահա Գյումրիի տարածքային սոցիալական ծառայության կողմից «Փարոս» համակարգում ընդունված են դրեթե 33 հազ. ընտանիք, որից 24 հազ. (66%) կամ երեք ընտանիքից երկուսը նպաստառու են (հաշվի ենք առել քաղաքում առկա ընտանիքների թիվը): «Փարոս»-ի տվյալները հիմք ընդունելիս, քաղաքի բնակչության թիվը հասում է 132 հազ.:

Գյումրիի բնակչության թիվն ըստ սոցիալական խմբերի հաշվարկելիս (օդտվել ենք տարբեր կազմակերպությունների տվյալներից) ստացվեց հետևյալ պատկերը.

1. Նախադպրոցականներ	22.9 հազ. մարդ
2. դպրոցականներ	29.1
3. թոշակառուներ	30.9
4. դորձագուրկներ	31.4
5. ուսանողներ	3.5
6. բյուջետային և մասնավոր ոլորակ աշխատողներ	20.2

Ընդամենը՝ 138 հազ. մարդ

Գյումրիի առկա բնակչության վերը բերված թվերի տարբերությունները հիմնականում արդյունք են ակտիվ տեղաշարժերի կամ արտահոսքի պայմաններում կատարված անբավար հաշվառումների, այլ կերպ ասած՝ ժողովրդագրական բարդ իրավիճակի:

6 Итоги всесоюзной переписи населения 1979 г. по Армянской ССР, т. 1, Ереван, 1980, с. 318.

Այսպիսով, ձեռքի տակ եղած տվյալները ցույց են տալիս, որ քաղաքի առկա բնակչության թիվը XX դ. վերջին տատանվել է 130–140 հազ. սահմաններում:

2. Ծնելիությունը: Ծնելիությունը և մահացությունը կենսաբանական երեսութներ են, սակայն բնակչության բնական աճի վրա որոշիչ գեր են կատարում մարդկանց կյանքի սոցիալական ու տնտեսական պայմանները:<sup>7</sup> Ընդհանուր առմամբ բնակչության վերաբաղրության (բնական և մեխանիկական) խնդիրներին առնչվելիս ձեռքի տակ սկսած է սւնենալ հավաստի տվյալներ ուսումնասիրվող տարածքի կամ բնակավայրի բնակչության ծնելիության, մահացության ու տեղաշարժերի մասին՝ որոշակի ժամանակահատվածում:<sup>8</sup>

Ծնելիության արդի վիճակը հնարավոր չէ ճիշտ դնահատել, եթե վերլուծության չի ենթարկվում ուսումնասիրվող ժամանակահատվածում տեղի ունեցած փոփոխությունները: XX դ. վերջին տասնամյակում ժողովրդագրական անկայուն իրավիճակը հանգեցրեց ծնելիության կտրուկ նվազման, ինչը, մեր կարծիքով, հիմնականում պայմանավորված էր ամուսնական տարիքի տղամարդկանց, մասամբ՝ կանանց արտագաղթով, որը հանգեցրեց տղամարդկին համամասնության խախտման: Այսպես, մոտավոր հաշվարկներով, ներկայումս քաղաքի 1000 բնակչի հաշվով 100 տղամարդուն համապատասխանում է 150 կին: Ստորև աղյուսակով ներկայացվում է ծնված երեխաների թվի շարժընթացը 1990–1999 թթ.<sup>9</sup> ըստ ամիսների:

#### Աղյուսակ 2

#### Ծնունդների թիվը գյումըիում

Ամիսներ	Տարեթվակը										Հնդ.
	1990	1991	1992	1993	1994	1995	1996	1997	1998	1999	
Հունվար	392	445	370	293	195	228	133	206	145	167	2574
Գետրվար	343	358	354	189	243	190	190	223	148	141	2379
մարտ	324	390	391	316	211	306	211	222	220	175	2766
ապրիլ	351	428	340	298	230	196	193	189	139	150	2514
մայիս	339	426	278	268	207	218	229	214	148	129	2456
հունիս	380	385	346	287	241	193	198	195	174	154	2553
հուլիս	387	446	354	300	203	197	176	233	168	131	2595
օգոստոս	358	394	369	269	254	329	177	205	153	137	2645
սեպտեմբեր	354	402	334	211	246	163	185	194	154	147	2390
հոկտեմբեր	390	428	315	244	291	315	187	161	172	142	2645
նոյեմբեր	372	358	275	232	340	187	224	214	150	160	2512
դեկտեմբեր	516	315	248	182	185	181	236	124	120	172	2279
ընդամենը	4334	4775	3974	3089	2846	2703	2339	2380	1891	1805	30308

7 С. А. Ковалев, Н. Я. Ковалевская. География населения СССР. М., 1980, с. 57.

8 Л. И. Валентей, А. Я. Кваша. Основы демографии. М., 1989, с. 8–9.

Աղյուսակից երկում է, որ 1990–1999 թթ., ամենից շատ ծնունդներ են գրանցվել գարնան և ամռան ամիսներին: 1991թ. Գյումրիում 1.3 անգամ ավելի շատ երեխա էր ծնվել, քան 1998–1999 թթ. Միասին վերցրած:

Նշված ժամանակահատվածում ծնելիության բարձր ցուցանիշներ են գրանցվել 1990–1992 թթ., որը բացարձում է աղետներից, տվյալ դեպքում երկրաշարժից հետո մարդկանց մոտ կորցրածը վերականգնելու վարքագույն:

Ինչպես վերելում ասվեց, 1993 թ. սկսած, ծնելիության նվազումը պայմանավորված էր բնակչության վերարտադրող դանգվածի արտագաղթով:

Հնդհանուր առմամբ, ծնելիության գործակցի վրա բացասական ազդեցություն ունեցան մի շարք հանգամանքներ, որոնցից հատկանշական է հատկապես էներգետիկ ճգնաժամը: Արդյունաբերական այն ճեռնարկությունները, որոնք քիչ էին տուժել երկրաշարժից, դադարեցին գործելուց, դրա արդյունքում տասնյակ հազարավոր մարդիկ զրկվեցին աշխատանքից, իսկ իշխանությունները փաստորեն ոչինչ չարեցին գործազրկությունը կրծատելու համար: Զախողվեցին աղեսի դոտու վերականգնման ծրագրերը: Նորանկախ Հայաստանի իշխանություններն ի վիճակի չեղան լուծելու քաղաքի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները: Ստեղծված ծանր պայմանները քաղաքի աշխատունակ բնակչության հատկապես տղամարդկանց, զգալի մասի արտադադրի պատճառ դարձան:

### Աղյուսակ 3

Գյումրիի բնակչության ծնելիության և նրա գործակցի  
շարժընթացը

Տարեթիվ	Ծնկած-ների թիվ	Տարբերությունը նախորդ տարվա համեմատությամբ	Բնակչության միջին թիվը (հազ.)	Ծնելիության գործակիցը (պրոմիլ)	Ծնելիության գործակիցը հանրապետությունում (պրոմիլ)
1990	4334		202.3	21,4	22,3
1991	4775	+441	206.5	23,1	21,3
1992	3974	-801	209.4	18,9	18,9
1993	3089	-885	210.2	14,6	15,8
1994	2846	-243	210.5	13,5	13,6
1995	2703	-143	210.9	12,8	13,0
1996	2339	-364	211.2	11,0	12,7
1997	2380	+41	211.5	11,2	11,6
1998	1891	-489	211.6	8,9	10,3
1999	1805	-86	211.5	8,5	9,2

Ծնելիության գործակիցը թեպետ բնդհանուր պատկերացում է տալիս բնակչության բնական շարժընթացի մասին, սակայն թերի է ու չի կա-

լող տալ նրա համեմատաբար ավելի լիարժեք պատկերը։ Այս պարագայում, անհրաժեշտ է օգտվել ծնելիության հատուկ գործակցից, որը որոշակի ժամանակահատվածում ծնվածների թվի և 15–49 տարեկան կանանց միջին թվի հարաբերության հազարավատիկն է։

Այսպես, 1999 թ. Գյումրիում ծնելիության հատուկ գործակցը կազմել է 40.4 սլրոմիլ, որն ըստ ընգունված չափանիշների՝ զգալի ցածր ցուցանիշ է։ Ասպածը հաստատելու համար, նշենք, որ 1979 թ. այդ գործակցը հասնում էր 64.2 սլրոմիլի, որը միջին չափի ցուցանիշ է։

Մոտավոր հաշվարկներով, 1990 թ. Գյումրիում ծնված երեխաների 40%-ը բաժին էր ընկնում 20–24 տարեկան կանանց, իսկ 1995 թ.՝ 46.8%։

Աղյուսակ 4  
Ծնունդների թիվն ըստ կանանց տարիքային խմբերի

Տարի Ծնունդ	16–19		20–24		25–29		30–34		35–39		40–49	
	Ծնունդ	%	Ծնունդ	%	Ծնունդ	%	Ծնունդ	%	Ծնունդ	%	Ծնունդ	%
1990	331	8.6	1465	40.0	1028	28.5	584	15.3	222	6.1	59	1.2
1995	119	10.4	533	46.8	261	22.9	147	12.9	65	5.7	14	1.3

Աղյուսակից երեսում է, որ ծնունդների ամենամեծ բաժինն ընկնում է 20–24 տարեկան կանանց, ամենափոքրը, ինչպես սպասվում էր՝ 40–49։ Բոլոր տարիքային խմբերում էլ նշված հինգ տարիների ընթացքում ծնունդների կտրուկ նվազում է գրանցվել։

Ծնելիության աճի վրա ազդող գործոններից են ինչպես ամուսնությունների թվի նվազումը, այնպես էլ ամուսնալուծությունների ավելացումը։ Կապված սոցիալ-տնտեսական ու քաղաքական անկայուն պայմանների հետ։ Արդյունքում աղքատության մեջ հայտնված հայ ընտանիքի չափահաս անդամները ապրուստի միջոցներ հայթայթելու համար բռնում են արտագաղթի ճանապարհ։

3. Մահացությունը։ Մահացությունը բնակչության վերաբռնության գործընթացներում երկրորդ կարևոր չափանիշն է։ Բնակչության ժողովրդագրական պատկերը թերի կլիներ առանց մահացության ցուցանիշների վերլուծման։ Բնական աճի հավաստի տվյալներ հնարավոր չեն ստանալ մահացության գործակիցների բացակայության գեպքում։

Հնդհանրապես բնակչության վերաբռնության քանակական չափորոշներից է մահացության ընդհանուր գործակիցը, սակայն դրանք, ըստ տարիքային խմբերի, տարբեր են։ Այն ավելի բարձր է մանկահասակների ու ծերերի շրջանում, իսկ ավելի ցածր՝ միջին տարիքային խմբում։ Այդ իսկ պատճառով, ավելի հավաստի է մահացության տարիքային կամ հա-

տուկ գործակիցը, որտեղ, հատկապես, կարևորվում է մանկամահացության (մինչև մեկ տարեկան) ցուցանիշը<sup>9</sup>:

**Աղյուսակ 5  
Գյումրիի բնակչության մահացության ցուցանիշները**

<i>Տարբերիչ</i>	<i>Մահացած-ների թիվը</i>	<i>Տարբերությունը նախորդ տար-վա համեմա-տությամբ</i>	<i>Բնակչության միջին թիվը (հազ.)</i>	<i>Մահացության գործակիցը (պրոմիլ)</i>	<i>Մահացության գործակիցը հանրապետությունում (պրոմիլ)</i>
1990	1175		202.3	5.8	6.1
1991	1320	+145	206.5	6.4	6.4
1992	1359	+ 39	209.4	6.5	6.9
1993	1459	+100	210.2	6.9	7.3
1994	1270	- 189	210.5	6.0	6.5
1995	1340	+ 70	210.9	6.3	6.6
1996	1377	+ 37	211.2	6.5	6.6
1997	1430	+ 53	211.5	6.7	6.3
1998	1400	- 30	211.6	6.6	6.3
1999	1447	+ 47	211.5	6.8	-

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը, 1990–1999 թթ. Գյումրիում գրանցվել է մահացության աստիճանական աճ: Այդ տարիներին մահացությունների գումարային թիվը կազմել է 13.6 հազ. մարդ, որը 2.9 հազ. ավելի է 1970–1979 թթ. և 1.1 հազ.<sup>10</sup> 1980–1989 թթ. մահացածների թվից: Զգալի տարբերություններ կան Գյումրիի և ամբողջ Հանրապետության մահացության գործակիցների միջև: 1990–1996 թթ. այդ գործակիցը հանրապետությունում ավելի բարձր էր, իսկ Գյումրիում այն բարձր էր 1996 թ. հետո:

Մահացությունների աճը Գյումրիում պայմանավորված էր մի շարք գործուներով, որոնք ունեին արտաքին և ներքին ազդակներ: Այսպես, վերջին տասնամյակում Գյումրիում մեծ տարածում է ստացել սրտի իշեմիկ հիվանդությունը, հատկապես սրտամկանի ինֆարկտը, որն, ըստ բժիշկ Ա. Ստեփանյանի<sup>10</sup>, հանդիսանում է մահացության հիմնական պատճառներից մեկը: 1991–1997 թթ. մահացությունների գրեթե 11%-ը պայմանավորված էր սրտամկանի ինֆարկտով: Ինչպես հայտնի է, առողջապահության խնդիրները կարևոր դեր ունեն բնակչության վերաբռնակությունը:

9 В. И. К о з л о в . Этническая демография. 1977, с. 156; Советская демография за 70 лет, М., 1987, с. 263.

10 Ա. Ս տ ե փ ա ն յ ա ն . Արտի իշեմիկ հիվանդությամբ հիվանդացության-մահացության դինամիկան Գյումրիում. – Հանրապետական գիտական նախարինական, նվիրված երկարաժման 10-ամյա տարեկան գիտական համաժողովի թներ. Գյումրի, 1999, էջ 160-161:

յան, առողջ սերնդաճի, երկարակեցության և հատկապես, մանկամահացության հետագա կրծատման գործընթացներում։ Մահացության ցուցանիշները սեռատարիքային խմբերի գասակարգելիս, պարզվում է, որ մեծ մասը հիսունն անց աղամարդիկ են՝ մոտ 52%։

Մեր կողմից անցկացված սպիոնագիական հարցումներից պարզեց, որ մահացությունների գույքը մասը արտածին ազդեցությունների արդյունք է։ Մոտավոր հաշվարկներով, ժողովրդագրական նման իրավիճակի պահպանման դեպքում, մոտ ապագայում մահացությունների քանակը կարող է գերազանցել ծնունդների թիվը։

#### 4. Բնական աճը։

Ինչպես հայտնի է, բնական աճը բնակչության վերարտադրության հիմնական ցուցանիշներից է, որը կախված է ծնելիության և մահացության հարաբերակցությունից, մասնավորապես, ծնելիության բարձր և մահացության ցածր գործակիցներից։ Ինչ վերաբերում է Գյումրի քաղաքի բնակչության բնական աճին, ապա այս  $XX$  դ. վերջին տասնամյակում ուներ հետևյալ պատկերը։

#### Աղյուսակ 6


Գյումրիի բնակչության բնական աճի ցուցանիշները 1990–1999 թթ.

Տարեթիվ	Ծնելիության գործակիցը (պրո- միլ)	Մահացութ- յան գործա- կիցը (պրո- միլ)	Բնական աճի գոր- ծակիցը (պրոմիլ)	Բնական աճը (տոկոս)
1990	21.4	5.8	15.6	1.5
1991	23.1	6.4	16.7	1.2
1992	18.9	6.5	12.4	1.2
1993	14.6	6.9	7.7	0.8
1994	13.5	6.0	7.5	0.7
1995	12.8	6.3	6.5	0.6
1996	11.0	6.5	4.5	0.4
1997	11.2	6.7	4.5	0.4
1998	8.9	6.6	2.3	0.2
1999	8.5	6.8	1.7	0.1

Աղյուսակից երևում է, որ նշված ժամանակահատվածում, Գյումրիում բնակչության բնական աճի գործակիցներն ունեցել են հաստատուն նվազման տեմպեր։

Գյումրի քաղաքի բնակչության բնական աճի շարժընթացն ավելի պատկերավոր է երեսում ներկայացվող գրաֆիկում (տե՛ս գծանկարը), ուր ծնունդների կտրուկ նվազմանը զուգընթաց հաստատուն աճում է մահացությունների թիվը։

## Գյումրիի բնակչության բնական աճի շարժընթացը



Եթե քաղաքի բնակչության բնական աճի շարժընթացը դիտարկենք՝ ենելով 1979 և 1999 թթ. տվյալներից, կստանանք հետեւյալ պատկերը. 1979 թ. Գյումրիի առկա բնակչության թիվը 206,6 հազ. էր, 1999 թ., մոտավոր հաշվարկներով՝ 135,0 հազ., ծնունդների ու մահացությունների թիվը 1979 թ. եղել է 3806 և 1158, որտեղից հետեւում է, որ բնական աճը կազմել է 2648 մարդ, 1999 թ.՝ համապատասխանաբար, 1805 և 1447, որի գեղքում բնական աճը կազմել է 358 մարդ. Բնական աճի գործակիցը նշված տարիներին 12.8 և 1.7 պրոմիլ էր, այլ կերպ ասած, 1979–1999 թթ. բնակչության բնական աճը նվազել է ավելի քան յոթ, իսկ առկա բնակչության թիվը՝ 1,5 անգամ. Այսպիսով, վերը շարադրվածից երեսում է, որ 1990–1999 թթ. Գյումրիի բնակչության աճը կազմել է 5,6%, ընդ որում ծնելիության գործակիցը նվազել է 2,5 անգամ, մահացությունն աճել է 1,2 անգամ, իսկ բնական աճը նվազել է ավելի քան 8,5 անգամ:

### ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В ГОРОДЕ ГЮМРИ (1990–1999 гг.)

ГАМЛЕТ САРГСЯН, АРТАШЕС БОЯДЖЯН

#### Р е з у м е

В 1989 г. в труднейших политических условиях в Армении проводилась перепись населения, данные которой были неполны, особенно в зоне землетрясения 1988 г. Поэтому, в представленных этнодемографических характеристиках

г. Гюмри в 1990 – 1999 гг. использованы данные текущих подсчетов населения. Анализ этих данных показывает, что в исследуемый период прирост населения составил 5,6%, коэффициент рождаемости уменьшился в 2,5 раза, число умерших возросло в 1,2 раза, а естественный прирост снизился более чем в 8,5 раза. Подобное демографическое положение обусловлено сложными политическими и социально-экономическими условиями и высокими темпами миграционных процессов.

### DEMOGRAPHIC PROCESSES IN THE TOWN OF GYUMRI (1990–1999)

*HAMLET SARGSYAN, ARTASHES BOAJYAN*

#### S u m m a r y

The last population census was conducted in Armenia under hard political situation of 1989. Its data were not full, especially for the 1988 earthquake zone. This survey concerns the amount, structure, migration, reproduction and other regularities of the Gyumri population changes, analysed on the basis of the periodic registrations' data. The demographic situation of the 1990–1999 period has undergone important changes. Thus, the amount of regular population has increased to 5.6% only, the birth rate has decreased by 2.5, the death rate has increased by 1.2, and the reproduction rate has decreased by more than 8.5. These demographic conditions are caused by the hard and unstable political, social-economic circumstances, the increasing migration.